

**«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ ռեկտոր, բզդ, պրոֆեսոր

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_22_” _12_ 2011թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՎՊՄԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ**

Ընդունվել է ՎՊՄԻ ՊՈԱԿ գիտխորհրդում

(արձանագրություն թիվ 10 “_22_” _12_ 2011թ.)

Ընդհանուր դրույթներ

1.1. «Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) մագիստրոսական ծրագրի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է համաձայն «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 06.12.2007թ.-ի 1193 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ի, Ինստիտուտի կանոնադրության, Ինստիտուտի մագիստրատուրայի ժամանակավոր կարգի:

1.2. Ղեկավարը նշանակվում է ռեկտորի հրամանով՝ ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի որոշման հիման վրա՝ ուսումնական գծով պրոռեկտորի ներկայացմամբ:

1.3. Ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան, ոչ պակաս քան 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի և ոչ պակաս քան 2 տարվա գիտահետազոտական աշխատանքի ղեկավարման փորձ:

1.4. Մագիստրոսական ծրագրի ղեկավարման համար Ղեկավարին տրվում է խորհրդատվական 100 ժամ (4 միավոր):

1.5. Ղեկավարն իրավունք ունի ղեկավարելու երկու մագիստրոսական կրթական ծրագրեր՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալու դեպքում:

II. Ղեկավարի գործնեության նպատակները և խնդիրները

2.1. Ղեկավարի գործնեության նպատակն է՝

2.1.1. ապահովել կրթական չափորոշիչներով սահմանված մագիստրոսական կրթական ծրագրի կատարումը,

2.1.2. նպաստել մագիստրոսական կրթական ծրագրերի որակի բարձրացմանը՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության և գիտության նախարարության՝ ուսուցման որակի ապահովման ոլորտում ընդունված որոշումները:

2.2. Ղեկավարի գործնեության խնդիրներն են՝

2.2.1. Իրականացնել աշխատանքներ մագիստրոսական կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով այդ ծրագրերի համապատասխանեցումը բարձրագույն կրթության Եվրոպական որակավորումների պահանջներին,

2.2.2. նպաստել մագիստրոսական կրթական ծրագրերի գիտահետազոտական հատվածով նախատեսած բաղադրիչների (կուրսային աշխատանք, ռեֆերատ, գիտական զեկուցում, գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով և այլն) որակի բարելավմանը,

2.2.3. ուսումնասիրել մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ծրագրային փաթեթները, մասնակցել դրանց քննարկմանը թողարկող ամբիոններում՝ տալով առաջարկներ ծրագրային փաթեթների վերանայման և արդիականացման վերաբերյալ,

2.2.4. մասնակցել մագիստրատուրայի ուսումնական գործընթացի քննարկմանը նվիրված թողարկող ամբիոնների նիստերին,

2.2.5. պարբերաբար մասնակցել մագիստրատուրայի ուսումնական պարապմունքների դասավանդմանը ,

2.2.6. վերահսկել մագիստրատուրայի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացումը:

III. Ղեկավարի հիմնական գործառույթները

3.1. Ղեկավարը.

- ուսումնասիրում է գործող մագիստրոսական ծրագրերը և պետական չափորոշիչները,
- մասնակցում է մագիստրոսական կրթական ծրագրի պարտադիր դասընթացների կրթաբովանդակային ձևավորմանը,
- մասնակցում է առարկայական ուսումնական ծրագրերի, պրակտիկաների ծրագրերի մշակմանը, քննարկմանը և հաստատմանը ,
- ներկայացնում է առաջարկներ ամբիոններին՝ անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի մշակման համար,
- վերահսկում է մագիստրոսական ծրագրի գիտահետազոտական աշխատանքի հատվածում նախատեսված ռեֆերատների և զեկուցումների պատրաստման, ներկայացման և հանձնման հետ կապված աշխատանքները,
- վերահսկում է մագիստրոսական ատենախոսությունների կատարման պլանով նախատեսված աշխատանքների իրականացումը,
- կազմում և իրականացնում է մագիստրոսական ծրագրերի մոնիթորինգի պլան, նախապատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական կրթական ծրագրերի,

մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպման վերանայման անհրաժեշտության մասին,

- կազմակերպում է խորհրդատվություններ մագիստրանտների համար՝ նրանց անհատական ուսումնական պլաններում ընդգրկված աշխատանքների մասին,

- կատարում է մագիստրոսական ատենախոսությունների թեմաների փորձաքննություն,

- նախապատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարների թեկնածությունների մասին,

- մասնակցում է իր ղեկավարած ծրագրի ուսանողների մագիստրոսական ատենախոսություններին պաշտպանության թույլտվություն տալու մասին որոշումների կայացմանը,

- կազմակերպում է հանդիպումներ մագիստրատուրայի ուսանողների հետ՝ մագիստրատուրայի ուսումնական գործընթացին վերաբերող ուսանողներին հետաքրքրող հարցերի շուրջ,

- սեպտեմբերին ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ընթացիկ ուս. տարվա աշխատանքային պլանը, տարեվերջին ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքի մասին:

IV. Ղեկավարի պատասխանատվությունը

4.1. Ղեկավարի աշխատանքի կազմակերպման, համակարգման լիազորությունները սահմանվում են սույն կանոնակարգով և ամրագրվում աշխատանքային պայմանագրով:

4.2. Ղեկավարը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ գերազանցելու համար: